ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՔԵՐՈԲ ԲՈՅԱՋՅԱՆԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՔԵՐՈԲ ԲՈՅԱՋԵԱՆ, ՈՐ Ի ՀԱԼԷՊ, ՍԻՐԻԱ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու Հայրական սէրն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ, որ զօրակից էք Մայր Հայրենիքում ծաւալուող եկեղեցաշէն ծրագրերին:

Գոհութիւն եւ փառք ենք վերառաքում առ Բարձրեալ Տէրը, որ ազգս հայոց օրհնուած է բազում նուիրեալ որդիներով, ովքեր աստուածպարգեւ իրենց կեանքն արժեւորում են բարեգործութեամբ:

Հայրապետիս համար ուրախալի է, որ Դուք, կրելով Ձեր հոգում առ հայրենեաց սրբութիւնները Ձեր ազնիւ ծնողաց սէրն ու հաւատարմութիւնը, ի պայծառութիւն Հայաստանեայց Եկեղեցւոյ Ձեր արդար վաստակից մեծաձեռն նուիրատուութիւններ էք կատարում՝ մասնակցութիւն բերելով եկեղեցական մեր կառոյցների բարեզարդման աշխատանքներին: Այսօր, շնորհիւ Ձեր բարի յանձնառութեան, գեղեցկահիւս գորգերով վայելչօրէն զարդարուած են Վեհարանիս հանդիսութեանց սրահը եւ Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակի խորհրդանիշը հանդիսացող քաղաքամայր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցին: Գոհունակութիւն է նաեւ Մեզ համար, որ Դուք, ի սէր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ի վայելումն նրա զինուորեալ միաբանութեան, նուիրաբերեցիք եկեղեցական զգեստի հայաոճ ու շքեղ գործուածքներ:

Ցարգարժան Տիար Բոյաջեան,

Ձեր հաւատաւոր ընթացքի եւ մեր Եկեղեցուն մատուցած ծառայութիւնների բարձր գնահատանքով՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Դուք նոյն քաջեռանդութեամբ շարունակելու էք Ձեր ազգաշէն ու եկեղեցանուէր գործունէութիւնը՝ յաւէրժացնելով Ձեր անունը մեր Սուրբ Եկեղեցու երախտաւորների շարքում:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ կեանքի արեւշատ ու երջանիկ բազում օրեր եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Սեպտեմբերի
ի թուին Տեառն 2003 եւ ի թուին հայոց ՌՆԾԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 190